

Լիլիթ շատ կը սիրեր իրենց մանկապարտեզը, ժպտադեմ ուսուցչուհիները, հոգատար տնտեսուհիները, իրեն տարեկից ընկերներն ու ընկերուհիները, սրահը՝ ուր կը նստէին քով-քովի ու կ'երգէին, պարտեզը ուր կը վազվզէին արեւոտ օրերուն: Մէկ խօսքով ամէն ինչ որ կար իրենց մանկապարտեզին մէջն ու շուրջը, նոյնիսկ մանկապարտեզի ճամբուն վրայ յաճախ հաշոյ ու պոչը շարժող հսկայ շունը:

Ճիշդ է, առաջին օրը երբ մաման զինք յանձնեց մանկապարտեզի ամենասիրուն օրհորդին, ինք շատ լացաւ, բողբոցեց, փոքրիկ տոտիկները զարկաւ գետին ու մամայէն խնդրեց զինք այս անձանօթ միջավայրին մէջ առանձին չծագել:

- Մա՛մ.. մամա՛ ինչ կ'ըլլայ զիս հոս մի՛ ձգեր.- խնդրեց արցունքներուն մէջէն:

Այնքա՛ն հոգատար իր մաման անտարբեր, ուսուցչուհիին յանձնեց իր սակառը ու հեռացաւ: Լիլիթ շարունակեց հեկեկալ ու արցունքներուն մէջէն շուրջը դիտել... փոքրիկ տղեկ մը մօտեցաւ ու բռնեց ձեռքը:

- Մի՛ լար Լիլի, առ այս շաքարը..

- Անունս Լիլիթ է,- արցունքները սրբելով Լիլիթ մեկնեց ձեռքը:



# ԺԱՀՐԻԿԸ

## Պերճուհի Աւետեան

Արայիկն էր մանկապարտեզի ամենաժպտուն տղեկը, յետոյ ան դարձաւ Լիլիթին լաւագոյն ընկերը:

Քանի մը օր առաջ, առաւօտ մաման սովորականին պէս կանուխ չարթնցուց Լիլիթին, բացատրեց, թէ ներկայիս մանկապարտեզ կարելի չէր յաճախել, թէ նախազգուշութեան միջոցներ ձեռնարկուած էր ու բոլոր պատիկները պիտի մնային իրենց տուններուն մէջ: Լիլիթ շատ տխրեցաւ, որ իր ընկերները տեսնելու հնարաւորութիւն պիտի չունենար այլեւս: Մաման պայուսակէն հանեց հեռախօսը:

- Անուշիկս նախ խօսէ օրհորդ Անիի հետ, նոյնիսկ տեսակապով կրնաս տեսել զինք, բայց նախ հարցուր կը փափաքի..

Մաման կը փնտռէր օրհորդ Անիին համարը:

- Օ՛, մամ ես գիտեմ, ես գիտեմ..

Ու մինչ մաման շուարած կը մեկնէր հեռախօսը, Լիլիթ արագ հաստատեց կապը:

Օրհորդ Անի քնքշութեամբ բացատրեց թէ տեսակապ հաստատել այսօր դժուար էր, բայց խոստացաւ գալիք օրերուն անպայման առիթ ստեղծել:

Լիլիթ խօսեցաւ նաեւ Արայիկին հետ:

- Չե՛ս գիտեր ինչո՛ւ փակ է մեր մանկապարտեզը... Օ՛ Լիլի դուն մեր երկրի լուրերը չես լսեր:

Լիլիթ ամօթ զգաց իր տգիտութեան համար: Արայիկ բացատրեց թէ քորոնավիրուս անունով ժահր մը կը տարածուէր ու կը վարակէր մարդոց:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒՌԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՐՈՒՔԵԱՆ  
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՅԱՆ



- Ուշադիր եղիր Լիլի,- զգուշացուց Արայիկ:
- Քանի անգամ ըսի որ անունս Լիլի չէ,- քիչ մը յանդիմանական, քիչ մը գոհունակութեամբ ըսաւ Լիլիթ:
- Դուն ինձի համար Լիլի ես, իմ անուշիկ ընկերուիս: Եզրակացուց Արայիկ:

Արայիկ:

Լիլիթ շիկնեցաւ, չպատասխանեց, Արայիկը լաւ ընկեր էր. հիմա որ երկու օր է չէին հանդիպեր զգաց որ շատ կարօտցեր էր... շա՛տ:

- Լիլի, Լիլի, անջատեցի՞ր կապը:
- Չէ, դուն լաւ ընկեր ես..
- Լիլի՛ շուտով կը տեսնուինք, կրկին ուշադիր, կարօտցեր եմ քեզի: Արայիկի ձայնը մեղմացաւ, իսկ Լիլիթ զգաց որ այտերը կ'այրէին: Մաման եկաւ ներսի սենեակէն:

- Տակաւին ուրիշ ընկերուիներու հետ կ'ուզե՞ս խօսիլ անուշիկս.- ըսաւ ան շոյելով Լիլիթի թաւշեայ այտերը: Քանի որ երկար պիտի մնաս տունը եւ ես ալ ստիպուած եմ դուրս գալու, պապան քեզի համար հեռախօս պիտի առնէ, կրնաս բոլոր ընկերուիներուդ հետ խօսիլ:

Հայրիկը իրիկունը տուփ մը յանձնեց Լիլիթին՝ նոր հեռախօսն էր: Լիլիթին ուրախութիւնը անսահման էր, բայց նաեւ զգոյշ էր, նախքան հեռախօսը ձեռք առնելը, ախտահանիչ թաշկինակով սրբեց տուփը, ապա բոլորին փոխանցեց իր համարը:

(Շարունակելի)



# ԽԱՂԷՐ

## ՀԱԿԱՆԻՇՆԵՐ


## ԺՊԻՏ

Ձախ կողմի սիւնակի իւրաքանչիւր բառ միացո՛ւր աջ կողմի սիւնակի համապատասխան հականիշին:

արի  
տաք  
սուղ  
համեստ  
խորունկ  
բարդ  
նիհար  
անպէտ  
բարձր  
սակաւախօս

գոռոզ  
ծանծաղ  
վախկոտ  
գէր  
պաղ  
ցած  
աժան  
պարզ  
շատախօս  
պիտանի

Ուսուցիչը- Կատուն ի՞նչ կ'ընէ:  
Աշակերտը- Կը մայէ:  
Ուսուցիչը- Իսկ գայլը, ի՞նչ կ'ընէ:  
Աշակերտը- Կ'ուտէ ոչխարը...



Ներկէ՛ նախասիրած գոյներով:

# ԲՈՅՍՆԵՐՈՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## Ինչո՞ւ բոյսերը կանաչ են

Բոյսերը ունին յատուկ սիւթ մը, որ քլորոֆիլ կը կոչուի: Այդ սիւթին օգնութեամբ բոյսը օդէն ածխաթթու կոչուած կազը կը ներծծէ եւ փոխարէնը թթուածին կ'արտադրէ: Թթուածին կը շնչեն աշխարհի բոլոր ապրող էակները, այսինքն նաեւ մարդիկ: Երբ օդին ջերմաստիճանը կը բարձրանայ, քլորոֆիլը փոխազդեցութեան մէջ կը մտնէ շրջակայ միջավայրին հետ, եւ բոյսերը վառ կանաչ գոյն կը ստանան:

## Ո՞ր բոյսերը մակաբոյծներ կը կոչուին Ի՞նչ են մակաբոյծները

Մակաբոյծը ուրիշներուն հաշուին ապրողն է: Մակաբոյծներ կան նաեւ բոյսերուն մէջ: Այսպիսի բոյսեր չեն կրնար ինքնուրոյն ածխաթթու կազը իւրացնել օդէն, ո՛չ ալ հանքանիւթերը՝ ջուրէն, ինչպէս որ կ'ընեն ուրիշ շատ մը բոյսեր: Այդ պատճառով մակաբոյծները կը տեղաւորուին միւս բոյսերուն շատ մօտ եւ կ'ապրին անոնց տերեւներուն ու արմատներուն հայթայթած սնունդին հաշուին: Այդպիսի «ծրիակերի» վառ օրինակն է գաղթենի կոչուած բոյսը: Ան կանաչ տերեւներ չունի, որովհետեւ քլորոֆիլ չի պարունակեր: Ներծծելով այդ ծառերուն արմատներուն օգտակար սիւթերը՝ ան կը ստանայ կենսական կարելորութիւն ունեցող բոլոր անհրաժեշտ սիւթերը՝ միեւնոյն ժամանակ մեծ վնաս հասցնելով ծառին: Կեանքին մեծ մասը գաղթենին հողին տակ կ'անցընէ իսկ հողի մակերեսին կը յայտնուի տարուան ընթացքին միայն քանի մը շաբաթով՝ բազմանալու համար, ինչ որ տեղի կ'ունենայ գարնան:


Այս մակաբոյծ բոյսին տեսքը բաւական հետաքրքրական է, անոր վարդագոյն կամ մուրօ կարմիր ծաղիկները, ճերմակ հաստ ցօղունի մը վրայ շարուած են:

## Ո՞ւր կ'աճի երշիկի ծառը

Ափրիկէի մէջ կարելի է տեսնել գարմանալի ծառ մը, որ երշիկի ծառ կը կոչուի: Լայնասաղարթ պսակի տակ՝ երկար ու ամուր ցօղուններու վրայ, կախուած են մեծ պտուղներ, որոնք երշիկի կը նմանին: Անոնց երկարութիւնը մինչեւ 50-60 սանթիմետրի կը հասնի, եւ կը կշռէ մօտաւորապէս 8 քիլոկրամ: Չնայած իր արտաքին գրաւիչ տեսքին, երշիկի ծառին պտուղները կարելի չէ օգտագործել որպէս սնունդ, որովհետեւ թունաւոր սիւթ կը պարունակեն:

Մակայն կենդանիներու եւ թռչուններու համար «երշիկները» ոչ միայն վտանգաւոր չեն այլ ընդհակառակը օգտակար են:

Այս տարօրինակ ծառին պտուղները կ'օգտագործուին ժամանակակից բժշկութեան մէջ:




# «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐԸ ԵՒ ՄԵՆՔ

«Քորոնա» ժահրերը ժահրերու մեծ ընտանիք են, որոնք յայտնաբերուած են ինչպէս կենդանիներու, այնպէս ալ մարդոց մօտ:

Ինչպէ՞ս կրնանք կանխել «քորոնա» ժահրով վարակուելու հաւանականութիւնը:

- 1.- Ձեռքերը յաճախ լուալ օճառով եւ ջուրով կամ օգտագործել ալքոլի վրայ հիմնուած ձեռքի քսուկներ, նոյնիսկ եթէ ձեռքերը տեսանելիօրէն աղտոտ չեն: Ձեռքերը լուալը կը վերացնէ «Քորոնա» ժահրը:
- 2.- Հագալու եւ փոնգտալու պարագային պէտք է ծածկել բերան ու քիթը եւ անմիջապէս դարձեալ լուալ ձեռքերը:
- 3.- Անուազն մէկ մեթր հեռաւորութիւն պահել ձեր եւ այլ մարդոց միջեւ, յատկապէս անոնց, որոնք կը հագան կամ կը փոնգտան:
- 4.- Խուսափիլ աչքերու եւ բերանի հպումներէն: Ձեռքերը կը դպչին բազմաթիւ մակերեսներու, որոնք կրնան աղտոտ ըլլալ ժահրով
- 5.- Խուսափիլ հոում կամ չմշակուած միս ուտելէ:
- 6.- Եթէ շերմութիւն հագ եւ շնչառութեան դժուարութիւն ունիք անմիջապէս դիմել բժիշկին:



# ԽԱՂԱՂԿԱՆ ՈՎԿԻԱՆՈՍԸ ԻՍԿԱՊԵՍ ԽԱՂԱՂ Է

Ժամանակին Խաղաղական ովկիանոսը Մեծ ովկիանոս կոչուած է, որովհետեւ իսկապէս աշխարհի ամենամեծ ովկիանոսն է: Երկրորդ անունաւոր՝ Խաղաղական ովկիանոս, ստացած է շնորհիւ փորթուգալցի հետախուզող Մաժելլայի:

Մաժելլա աւելի քան 3 ամիս անցուցած է Խաղաղական ովկիանոսին մէջ: Այդ ընթացքին եղանակը հաճելի եղած է եւ Մաժելլային արշաւախումբը փորթրիկի չէ հանդիպած: Այս պատճառով ալ նշանաւոր ծովագնացը ովկիանոսը կոչած է Խաղաղական ովկիանոս: Սակայն հետագային, բազմաթիւ ծովագնացներ ականատես եղած են Խաղաղական ովկիանոսին ահեղ բնաւորութեան: Գիտնականները կը պնդեն, որ այս ովկիանոսին մէջ է, որ կը ծնին ցունամիներու մեծ մասը: Անոնք բարձր ու երկար ալիքներու շարք կը ներկայացնեն եւ իսկայական արագութեամբ ցամաք կը հասնին: Բայց հակառակ այս բոլորին, այս ովկիանոսին անուը Խաղաղական մնացեր է:

Խաղաղական ովկիանոսը կը գտնուի ամերիկեան ցամաքամասին՝ անոր արեւելքէն, եւ արեւմուտքէն՝ ասիական ու արեւելաօվկիանոսի ցամաքամասերուն միջեւ:

Խաղաղականը աշխարհի ամենէն մեծ ովկիանոսն է եւ կը ծածկէ անոր մակերեսին աւելի քան 30 առ հարիւրը, այսինքն՝ մեր մոլորակի շուրջը մակերեսին գրեթէ կեսը: Աւելի քան քսանհինգ հազար կղզիներ գոյութիւն ունին Խաղաղական ովկիանոսին մէջ, եւ անոնց մեծ մասը կը գտնուի հասարակածին հարաւը:

